DEFENSE COUNCIL OF WESTERN ARMENIA (DCWA)
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

P.O. Box 8022
La Crescenta, CA 91224 U.S.A.
www.western-armenia.org email: westernarmenia@gmail.com
sevres1920@gmail.com

09.30.2009

(ԱՐԵՒԵԼՅԱՆ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՒՈԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ոչ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրության» մէջ. «Վերահաստատելով երկու երկրների միջեւ գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրաւունքի համապատասխան պայմանագրերով.» շարադրանքին

Նման շարադրանքը սահմանափակում է քաղաքական խաղաղ միջոցներով իր հայրենիքին վերատիրանալու աերումտահայութեան՝ սփյուռքահայության եւ համայն հայության հնարաւորությունները, հայությանը մղելով դէպի Թուրքիայի հետ պատերազմի այլընտրանք:

Ոչ Արեւմտյան Հայաստան-հայրենիք վերադառնալու պատերազմի ընտրանքին

Այժմ ինչպիսի ցանկություններ, խոսքեր եւ բացատրություններ հնչեն, միեւնոյն է, (Արեւելյան) Հայաստանի Հանրապետութեյան եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրության բովանդ-ակությունից է բխում պատերազմի կամ հավասարազոր այլ աղետի վտանգը:

Ստորագրլիք փաստաթղթի բովանդակությունում ամրագրեք ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրօ Վուլսոնի 1920 թ.Նոյեմբերի 22-ի վճռագրի գործադրությունը հետապնդելու Արեւմտահայութեան իրաւունքը

Ստորագրելիք փաստաթղթերում արեւմտահայությանը այդպիսի իրավունք չվերապահելու պարագայում. **կամ մենք հայ չենք, կամ դուք հայ չէք**՝ դրանից բխելի բոլոր հետեւանքներով:

Իմաստուն եղեք

Դիւանագիտական բանակցությունների ժամանակ Թուրքիան դեռ պարտություն չի կրել:
Ավելի լավ է ընդհատել երկկողմ հարաբերությունների զարգացում սկսելը, քան թե վտանգավոր բովանդակություն ունեցող փաստաթուղթ ստորագրել:

**Արեւմտյան Հայաստանի Պաշտպանության Խորհուրդի
Քաղաքական բաժանմունք**